ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ
ԴԱՇՏԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

25.12. 2017թ
N_61_

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊՐ-Ն Ա.ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ

Հարգելի մարզպետ,

Ձեզ ենք ներկայացնում Դաշտաքար համայնքի 19.12.2017 թվականի ավագանու թիվ 11 նիստի արձանագրությունը:

Համայնքի ղեկավար՝ Ն. Մալխասյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ
# ԴԱՇՏԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 11

2017 թ-ի դեկտեմբերի 19-ին, ժամը 11-ին, Դաշտաքար համայնքում տեղի ունեցավ ավագանու թիվ 11 նիստը: Նիստին մասնակցում էին ավագանու անդամներ.

Աբրահամ Աբրահամյան
Լյուդվիգ Այնազյան
Արմեն Աթոյան
Արամ Մալխասյան
Անգին Սարգսյան

Համայնքապետարանի առաջին կարգի մասնագետ՝ Հ. Հակոբյանը
Նիստը նախագահում էր Համայնքի ղեկավար՝ Ն.Մալխասյանը
Նիստը քարտուղարում էր աշխ. քարտուղար՝ Ա. Վարդանյանը

### Օրակարգում

1. Օրակարգը հաստատելու մասին հարցը
2. Համայնքի 2017թ-ի բյուջեում փոփոխություն կատարելու մասին հարցը.

Լսեցին - Նիստի օրակարգը հաստատելու մասին հարցը.

/Զեկ.Ն.Մալխասյանը /

Արտահայտվեցին ավագանու անդամներ Անգին Սարգսյանը և Արամ Մալխասյանը

Լսելով զեկուցողին և արտահայտվողների կարծիքները, որոնք իրենց խոսքում պաշտպանեցին համայնքի ղեկավարի առաջարկությունը
Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Տեղական Ինքնակառավարման Մասին» օրենքի 12-րդ հոդվածի դրույթներով
Դաշտաքարի ավագանին որոշեց.

### ՈՐՈՇՈՒՄ 29

Հաստատել 19.12.2017 թվականի ավագանու նիստի օրակարգը.

1. Օրակարգը հաստատելու մասին հարցը
2. Համայնքի 2017թ-ի բյուջեում փոփոխություն կատարելու մասին հարցը.

Որոշումն անցավ միաձայն

Աբրահամ Աբրահամյան

Լյուդվիգ Այնազյան

Արմեն Աթոյան

Արամ Մալխասյան

Անգին Սարգսյան

Լսեցին— Համայնքի 2017թ-ի բյուջեում փոփոխություն կատարելու մասին հարցը.
(զեկուցող՝ Ն. Մալխասյան)

Արտահայտվեցին ավագանու անդամներ Լյուդվիգ Այնազյանը և Արամ Մալխասյանը

*Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 5-րդ կետի*՝ ավագանին որոշեց.

ՈՐՈՇՈՒՄ 30

1. Վարչական բյուջեի կառավարման մարմնի պահպանում, գործառնական դասակարգման ծրագրի 4234 հոդվածից հատկացնել կառավարման մարմնի պահպանում գործառնական դասակարգման ծրագրի 4111 հոդվածին՝ 223 300 ՀՀ դրամ, վարչական բյուջեի կառավարման մարմնի պահպանում գործառնական դասակարգման ծրագրի 4234 հոդվածից հատկացնել գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցում գործառնական դասակարգման ծրագրի 4241 հոդվածին 70 000 ՀՀ դրամ:
2. կառավարման մարմնի պահպանում, գործառնական դասակարգման ծրագրի 4234 հոդվածը սահմանել 49 000 ՀՀ դրամ:
3. Վարչական բյուջեի պահուստային ֆոնդի գործառնական դասակարգման ծրագրի 4891 հոդվածից հատկացնել Աշխատանքի հետ կապված ընդհանուր բնույթի ծառայություններ ծրագրի 4241 հոդվածին 80 000 ՀՀ դրամ:
4. Վարչական բյուջեի պահուստային ֆոնդի գործառնական դասակարգման ծրագրի 4891 հոդվածից հատկացնել Գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցում ծրագրի 4241 հոդվածին 139 900 ՀՀ դրամ:
5. Վարչական բյուջեի պահուստային ֆոնդի գործառնական դասակարգման ծրագրի 4891 հոդվածից հատկացնել Հանգիստ, մշակույթ, կրոն գործառնական դասակարգման ծրագրի 4269 հոդվածին 212 000 ՀՀ դրամ:
6. Վարչական բյուջեի պահուստային ֆոնդի պահուստային միջոցներ գործառնական դասակարգման ծրագրի 4891 հոդվածը սահմանել 808 100 ՀՀ դրամ:

Համայնքի ղեկավար՝ Ն.Մալխասյան

Աշխ. քարտուղար՝ Ա.Վարդանյան